Շիրակի մարզի Պեմզաշենի միջնակարգ դպրոց

ՊՈԱԿ

«Արվեստ» խմբակի

2023 – 2024 ուս. տարվա ծրագիր

Տեղադրող՝ Բավական Մխիթարյան

II – V դասարան

Scanned by TapScanner

«ԱՐՎԵՍՏ» ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Ծրագրում առանձնացված են որոշակի թեմաներ, որոնք համապատասխանում են սովորողների նախասիրություններին, հետաքրքրություններին ու պահանջմունքների բավարարմանը:

Ծրագրում նշված է ընդհանուր ժամաքանակը ուսումնական տարվա համար, թեմայի վերնագիրը, տրամադրվող ժամաքանակը, նպատակները, խնդիրները, ակնկալվող վերջնարդյունքները՝ հիմնական շեշտը դնելով սովորողի գիտելիքների, կարողունակությունների ու հմտությունների զարգացման վրա:

1. Թեմայի անվանում, ժամաքանակը
2. Նպատակները
3. Խնդիրները
4. Վերջնարդյունքները
5. Բովանդակությունը

Scanned by TapScanner

«ԱՐՎԵՍՏ» ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

(շաբաթական՝ 2 ժամ, տարեկան 68 ժամ)

2 - 5 դասարաններ

Արվեստի պատմությունը և նրա տեսակները (20 ժամ)
Նպատակը
• Դաստիարակել ազգային, հոգևոր և բարոյագեղագիտական արժեքներով օժտված ստեղծագործող մարդ և երկրի քաղաքացի • Սովորողներին ծանոթացնել արվեստի պատմության հետ • Ծանոթացնել դեկորատիվ - կիրառական արվեստի հետ
Խնդիրներ
• Ծանոթացնել ճարտարապետության և քանդակագործության գաղտնիքներին •Ծանոթացնել ազգային զարդանախշերի ծագումնաբանության զարգացման առանձնահատկություններին . Ծանոթացնել այլ ժողովուրդների ճարտարապետությանը և քանդակագործությանը
Վերջնարդյունքներ
. Կիմանան ինչպես է առաջացել ճարտարապետությունը և քանդակագործությունը . Կիմանան և կտարբերի ազգայինը . Կիմանա նյութերը մշակելու և դրանցով աշխատելու հնարները
Բովանդակություն
. Արվեստի պատմություն (5 ժամ) . Դեկորատիվ - կիրառական արվեստ (5ժամ) .Ծեփակերտում կավով կամ պլաստիլինով (10 ժամ)

Scanned by TapScanner

Նախնադարյան (10 ժամ) արվեստ
Նպատակը
. Ձևավորել հետաքրքրություն նախնադարյան արվեստի նկատմամբ, թե նախնադարյան մարդը ինչպես է աշխատել և արարել քարե դարում և ստեղծել մշակույթ . Ծանոթացնել բնական նյութերի մշակման պարզագույն եղանակներին՝ հաշվի առնելով մշակման առանձնահատկություններին
Խնդիրներ
· Ծանոթացնել նախնադարյան արվեստի հուշարձաններին · Ծանոթացնել հարթաքանդակների և որմնանկարների պատմության հետ
Վերջնարդյունքներ
. Կիմանա և կկարողանա բացատրել նախնադարյան արվեստի պատմությունը . Կդրսևորի մշակութային ընկալման և արժևորման կարողունակություններ, արվեստի որոշ տեսակներում ստեղծագործական աշխատանքներ կատարելու ունակություններ և հմտություններ . Կճանաչի և կարժևորի ազգային մշակույթը, նյութական և ոչ նյութական ժառանգությունը
Բովանդակություն
. Նախնադարյան արվեստի հուշարձաններ՝ հայկական բարձրավանդակում(2 ժամ) . Մենհիրներ (2 ժամ) . Դոլմեններ (2 ժամ) . Կրոմլեխներ (2 ժամ) . Վիշապներ (2 ժամ)

Scanned by TapScanner

Գեղանկարչություն (38 ժամ)
Նպատակը
· Բնության նկատմամբ սիրո և հոգատար վերաբերմունք . Զնավորել գեղեցիկը տեսնելու, գնահատելու, պահպանելու կարողունակություն · Զարգացնել ուշադրությունը, դիտողականությունը, երևակայությունը
Խնդիրներ
. Զարգացնել պատկերավոր մտածողություն, գեղագիտական դաստիարակություն, կարողունակություններ
Վերջնարդյունքներ
. Գիտակցի հայկական արվեստի ներդրումը , ինչպես նաև ազգային, այնպես էլ համաշխարհային արվեստում . Հայտնի կարծիք արվեստի տեսակների մասին . Հասկանա իր առջև դրված խնդիրները, մշակի և կատարի քայլեր այն իրագործելու ուղղությամբ
Բովանդակություն
. Բնանկարի ժանր (5 ժամ) . Դիմանկարի ժանր (5 ժամ) . Դիցաբանական ժանր (4 ժամ) . Անիմալիստական ժանր (5 ժամ) . Կենցաղային ժանր (5 ժամ) . Կրոնական ժանր (4 ժամ) . Նատյուրմորտի ժանր (5 ժամ)

Scanned by TapScanner